Մեդիագրագիտության վերապատրաստման դասընթացներ ուսուցիչների համար

27.11.2017

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը հրավիրում է Երևանի և մարզերի միջին և ավագ դպրոցների ուսուցիչներին՝ մասնակցելու մեդիագրագիտության վերապատրաստման դասընթացների: 3-5 օր տևությամբ դասընթացները տեղի կունենան հունվար-փետրվար ամիսներին. դրանց ընթացքում ուսուցիչները կստանան անհրաժեշտ տեսական և գործնական գիտելիք, նյութեր և ձեռնարկ՝ դպրոցում մեդիագրագիտություն դասավանդելու համար:

Դիմումների վերջնաժամկետը դեկտեմբերի 17-ն է:

Մեդիագրագիտությունը մեդիայի աշխատանքը հասկանալու, տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու, լուրերը վերլուծելու, համեմատելու, ստուգելու հմտությունների ամբողջությունն է, որ կարող է դասավանդվել որպես տարբեր առարկայական ծրագրի մաս (օրինակ՝ հասարակագիտության), կամ առանձին խմբակի ձևաչափով:

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը և Կրթության և գիտության նախարարությունը համատեղ հուշագրով հաստատել են դպրոցներում մեդիագրագիտության ներառման կարևորությունը:

ՄՆԿ պատրաստած «Մեդիագրագիտություն» ձեռնարկը երաշխավորվել է ԿԳՆ կողմից՝ որպես ուսումնաօժանդակ գրականություն: Կազմակերպության ուսումնական ռեսուրսները և նախագծերը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից այս տարի արժանացել են Գլոբալ մեդիա և ինֆորմացիոն գրագիտության գլխավոր մրցանակին:

Դասընթացներին կարող են մասնակցել բոլոր այն ուսուցիչները, ովքեր հետաքրքրված են թեմայով և ցանկություն ունեն վերապատրաստումից հետո կիրառել գիտելիքը դպրոցում: Մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

ա) ինքնակենսագրություն (նշել դիմողի հեռախոսահամարն ու էլ. փոստի հասցեն),

բ) համառոտ նկարագրություն, թե ինչպես եք նախատեսում ներառել մեդիագրագիտությունը դպրոցում (300 բառի սահմաններում):

Փաստաթղթերն ուղարկել Մանե Գրիգորյանին՝ mgrigoryan@mediainitiatives.am էլեկտրոնային հասցեով:

Մանրամասների համար զանգահարեք Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, հեռ. 010 583620:

Դասընթացը կազմակերպվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով իրականացվող «Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագրի շրջանակում: